



<p><i>Համարը</i> N 846-Ն <i>Տիպը</i> Հրաման <i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀԳՏ 2007.11.01/29(269) Հոդ.370 <i>Ընդունող մարմինը</i> Կրթության և գիտության նախարար <i>Ստորագրող մարմինը</i> Կրթության և գիտության նախարար <i>Վավերացնող մարմինը</i> <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 11.11.2007</p>	<p><i>Տեսակը</i> Հիմնական <i>Կարգավիճակը</i> Գործում է <i>Ընդունման վայրը</i> Երևան <i>Ընդունման ամսաթիվը</i> 04.10.2007 <i>Ստորագրման ամսաթիվը</i> 04.10.2007 <i>Վավերացման ամսաթիվը</i> <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i></p>
---	--

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
12 հոկտեմբերի 2007 թ.
Պետական գրանցման թիվ 11007360

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

4 հոկտեմբերի 2007 թ. N 846-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հունիսի 17-ի N 900-Ն որոշմամբ հաստատված «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը» (մաս 8. Ուսումնական գործընթացի արդյունքների գնահատման համակարգը) և ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի N 1579 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության» 10-րդ կետի «ԺԷ» ենթակետի պահանջը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Հանրակրթության վարչության պետին (Ն. Հովհաննիսյան), օրենսդրության և իրավաբանական վարչության պետին (Մ. Գրիգորյան) 10-օրյա ժամկետում սահմանված կարգով փաստաթուղթը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Բ. Եսայանին:

ՀՀ կրթության և գիտության նախարար՝

L. Մկրտչյան

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Սույն կարգը մշակվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հունիսի 17-ի N 900-Ն որոշմամբ հաստատված «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը» (մաս 8. Ուսումնական գործընթացի արդյունքների գնահատման համակարգը):

1. Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատումը կատարվում է գիտելիքների, կարողությունների ու հմտությունների բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական աճի (առաջադիմության) բնութագիր:

2. Սովորողի ուսումնական աճի բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ առաջին դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից: Առաջադիմությունն արձանագրելու համար հիմք են հանդիսանում «Միջնակարգ հանրակրթական դպրոցի օրինակելի ուսումնական պլանում» ընդգրկված առաջին դասարանի ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված՝ սովորողին ներկայացվող որակական պահանջները (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ):

3. Տարեկան ամփոփիչ գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր առարկայի համար կազմված ստուգման թերթիկի միջոցով (Հավելված 1):

4. Սույն կարգով տրված ստուգման թերթիկի օրինակելի ձևին համապատասխան առաջին դասարանի յուրաքանչյուր ուսումնական առարկայի համար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատվում է ստուգման թերթիկի նմուշօրինակ՝ համապատասխան առարկայական չափանիշներով և բնութագրիչներով:

5. Ստուգման թերթիկի նմուշօրինակին կից հաստատվում է «Սովորողի ուսումնական ձեռքբերումների ամփոփիչ բնութագրի ձև» (Հավելված 2), որտեղ ուսուցիչը գրանցում է տվյալ առարկայից սովորողի ուսումնական առաջադիմության արդյունքները: Սովորողի ուսումնական ձեռքբերումների ամփոփիչ բնութագրի ձևը պետք է լրացվի տվյալ առարկայի ստուգման թերթիկի նմուշօրինակի պահանջներին համապատասխան:

6. Ուսուցիչը լրացնում է նաև «Առաջին դասարանում սովորողի հոգեբանական զարգացման բնութագրման թերթիկը» (Հավելված 3):

7. Յուրաքանչյուր առարկայի համար «Ստուգման թերթիկի օրինակելի ձևին» համապատասխան (Հավելված 1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հաստատում է առաջին դասարանի յուրաքանչյուր ուսումնական առարկայից սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների բնութագրման միջոցով տարեկան ամփոփիչ գնահատման չափանիշները և բնութագրիչները:

8. Ուսուցչի կողմից լրացվում է «Սովորողի ուսումնական ձեռքբերումների ամփոփիչ բնութագրման ձևի» (Հավելված 2) և «Սովորողի հոգեբանական զարգացման բնութագրման թերթիկի» (Հավելված 3) առանձին օրինակ յուրաքանչյուր առարկայի համար:

9. «Սովորողի ուսումնական ձեռքբերումների ամփոփիչ բնութագրման ձևի» (Հավելված 2) և «Սովորողի հոգեբանական զարգացման բնութագրման թերթիկի» (Հավելված 3) լրացված օրինակը կցվում է «Աշակերտի անձնական գործին» (հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2000 թվականի օգոստոսի 15-ի N 264-Ս հրամանով), իսկ պատճենները տրվում են ծնողին (օրինական ներկայացուցչին):

Հավելված 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանի

ՄՏՈՒԳՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

Չափանիշներ	Բնութագրիչներ		
	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ

Ուսուցիչ _____

Ա. Ա. Հ. (ստորագրություն)

Հավելված 3
ՀՀ կրթության և գիտության
նախարարի 2007 թվականի
հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանի

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հոգեկան զարգացման ոլորտ	Դրսևորումները	Միջտ	Հաճախ	Ոչ միջտ	Հազվադեպ	Երբեք
1. Դպրոցի նկատմամբ վերաբերմունք	<ul style="list-style-type: none"> Դպրոց է հաճախում հաճույքով 					
<i>(դպրոցականի արտաքին և ներքին հոգեբանական դիրքորոշում)</i>	<ul style="list-style-type: none"> Հարմարվել է դպրոցական ռեժիմին, կարգ ու կանոնին 					
	<ul style="list-style-type: none"> Միքում և վստահում է ուսուցչին: Ուսուցիչը հանդես է գալիս որպես հեղինակություն (ռեֆերենտային անձ) 					
	<ul style="list-style-type: none"> Պատրաստակամ է կատարելու ուսումնական առաջադրանքները և հանձնարարությունները 					
	<ul style="list-style-type: none"> Ուշադիր է դպրոցական պարագաների (համազգեստ, դասագիրք, պայուսակ և այլն) նկատմամբ 					
	<ul style="list-style-type: none"> Ընդունում է իր տր (աշակերտի) սոցիալական կարգավիճակը 					
	<ul style="list-style-type: none"> Հետաքրքրվում է մեծահասակների դպրոցական կյանքին առնչվող հիշողություններով 					

	<ul style="list-style-type: none"> Դրսևորում է որոշ իմացական հետաքրքրություններ՝ գրելու, կարդալու, հաշվելու, շրջապատող միջավայրի և նոր փորձառությունների նկատմամբ: 					
<p>2. Կամային վարք և ուշադրություն (ուսումնառության մակարդակ)</p>	<ul style="list-style-type: none"> Դրսևորում է ուշադրության տեղափոխելիություն 					
	<ul style="list-style-type: none"> Կարողանում է անցում կատարել, օրինակ՝ խաղային գործողությունից ուսումնականի 					
	<ul style="list-style-type: none"> Կարողանում է որոշ ժամանակահատված կենտրոնանալ ուսումնական գործունեության շուրջ, չշեղվել կողմնակի ազդակներից 					
	<ul style="list-style-type: none"> Կարողանում է տրված օրինակով կատարել առաջադրանքը 					
	<ul style="list-style-type: none"> Լսում, ունկնդրում է ուսուցչի խոսքը 					
	<ul style="list-style-type: none"> Կարողանում է մինչև վերջ լսել ուսուցչին, հետո նոր պատասխանել հարցերին կամ անցնել հանձնարարության կատարմանը 					
	<ul style="list-style-type: none"> Մինչև վերջ կատարում և ավարտում է ուսումնական հանձնարարությունները 					
	<ul style="list-style-type: none"> Կարողանում է դասերի ժամանակ հանգիստ նստել տեղում 					
	<ul style="list-style-type: none"> Զբաղվում է ուսումնական գործունեությամբ հանգիստ, առանց աղմուկի 					
	<ul style="list-style-type: none"> Դասերին կամ այլ իրավիճակներում հանգիստ սպասում է իր հերթին 					
	<ul style="list-style-type: none"> Ուշադիր է իր իրերի նկատմամբ, չի կորցնում 					
	<ul style="list-style-type: none"> Դրսևորում է իր զգացմունքները կառավարելու, զսպելու պարզագույն հմտություններ: 					

<p>3. Սոցիալական զարգացում.</p>	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է կառուցել փոխադարձ վստահության և հարգալից վերաբերմունքի վրա հիմնված հարաբերություններ ուսուցչի հետ, ընդ որում, յուրաքանչյուր իրավիճակին համարժեք 					
<p><i>Փոխհարաբերությունները ուսուցչի հետ</i></p>	<ul style="list-style-type: none"> • Դիմում է ուսուցչին, հարցեր տալիս նրան, խոսակցություն սկսում 					
	<ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտության դեպքում դիմում է ուսուցչի օգնությանը 					
	<ul style="list-style-type: none"> • Կատարում է ուսուցչի հանձնարարությունները, ցուցումներն ու առաջադրանքները 					
	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է հարաբերություններ կառուցել համադասարանցիների հետ 					
<p><i>Փոխհարաբերությունները համադասարանցիների հետ</i></p>	<ul style="list-style-type: none"> • Ունի հասակակից ընկերներ 					
	<ul style="list-style-type: none"> • Օգնում է համադասարանցիներին ինչպես ուսումնական, այպես էլ այլ իրավիճակներում, ընդունում ընկերների օգնությունը 					
	<ul style="list-style-type: none"> • Պատրաստ է իր անձնական (ուսումնական և այլ) իրերը տրամադրել համադասարանցիներին 					
	<ul style="list-style-type: none"> • Ուսուցչի օգնությամբ կարող է գնալ փոխզիջումների 					
	<ul style="list-style-type: none"> • Ճանաչում և գնահատում է հասակակիցների հնարավորությունները, նրանց նմանություններն ու տարբերությունները 					
	<ul style="list-style-type: none"> • Դրսևորում է իրավիճակի օբյեկտիվ գնահատման (ուրիշի տեսանկյունից նայելու) պարզագույն ունակություն: 					
<p>4. Անձնային զարգացում.</p>	<ul style="list-style-type: none"> • Ճանաչում է իր եւր՝ ֆիզիկական և հոգեկան հատկանիշների առումով, կարող է նկարագրել իրեն (ինչպիսին եմ ես) 					
<p><i>Ինքնագիտակցության զարգացում</i></p>	<ul style="list-style-type: none"> • Ունի իր անձի վերաբերյալ տեղեկություններ՝ հասցե, հեռախոս... 					

	<ul style="list-style-type: none"> • Հարգանքով է վերաբերվում իր անձին և գնահատում է իր հնարավորությունները՝ ես կարող եմ... 					
	<ul style="list-style-type: none"> • Հստակ տարբերակում է իր սեռը (սեռային ինքնագիտակցությունը) ու դրսևորում է իր սեռին համարժեք վարքագիծ՝ որոշակի իրավիճակներում վերահսկելով իր հույզերն ու զգացմունքները 					
	<ul style="list-style-type: none"> • Գիտակցում է, որ իր ներսում կան հույզեր ու զգացմունքներ և կարողանում է գնահատել դրանք 					
	<ul style="list-style-type: none"> • Գնահատում է իր եսը՝ ընկերների հետ համեմատության համատեքստում 					
	<ul style="list-style-type: none"> • Գիտակցում է իրեն ժամանակի և տարածության մեջ 					
	<ul style="list-style-type: none"> • Ունի էմփաթիայի զգացում, դրսևորում է ապրումակցում 					
<i>Հուզական զարգացում</i>	<ul style="list-style-type: none"> • Ճանաչում է հիմնական զգացմունքները՝ դրանք անվանում է խոսքով, ուղեկցում է ժեստերով ու դիմախաղով 					
	<ul style="list-style-type: none"> • Դիմացինի դեմքի արտահայտությունից, ժեստերից ու ձայնի ինտոնացիայից կարող է գուշակել զգացմունքները 					
<i>Մոցիալական վարք</i>	<ul style="list-style-type: none"> • Գիտի, թե որ իրավիճակում որ զգացմունքը դրսևորել: Տալիս է իրավիճակներին համարժեք հուզական արձագանք 					
	<ul style="list-style-type: none"> • Դրսևորում է բարեկիրթ վարքագիծ, օգտագործում է բարեկիրթ բառեր, ինչպես նաև ազգային մշակույթին բնորոշ շփման ձևեր 					
	<ul style="list-style-type: none"> • Մասնակցում է դասարանական կյանքին, ստանձնում և կատարում տարբեր սոցիալական դերեր 					
	<ul style="list-style-type: none"> • Մասնակցում է խմբային աշխատանքների, ներգրավվում ուրիշների մասնակցությամբ սկսված որևէ գործողության 					

	<ul style="list-style-type: none"> • Ունի սեռադերային համարժեք վարքագիծ 					
	<ul style="list-style-type: none"> • Հասկանում է ինչպես սեփական գործողությունների ազդեցությունը և հետևանքները ուրիշների վրա, այնպես էլ ուրիշների վարքն ու հետևանքները 					
	<ul style="list-style-type: none"> • Կատարում է սեփական վարքի դրդապատճառների ստորադասում, կարողանում է ճնշել իր անմիջական ցանկությունները, ասենք՝ չարձագանքել իրեն հետաքրքրող առարկային: 					
5. Իմացական ոլորտ	<ul style="list-style-type: none"> • Կարող է նկարագրել առարկաներն ու երևույթները, ասել նրանց հատկությունները 					
	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է համեմատել առարկաները՝ ասելով նրանց նմանություններն ու տարբերությունները 					
	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է հաշվել առանց շարժողական բաղադրիչների (հաշիվ՝ անձայն՝ շուրթերը շարժելով, շշուկով՝ գլուխը շարժելով, մատով ցույց տալով, ձեռքով դիպչելով...) 					
	<ul style="list-style-type: none"> • Օգտագործում է որոշ հասկացություններ 					
	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է որոշ կանխատեսումներ անել 					
	<ul style="list-style-type: none"> • Նկատում է շրջապատում տեղի ունեցող փոփոխությունները 					
	<ul style="list-style-type: none"> • Կատարում է ընդհանրացումներ. ըստ հատկանիշի խմբավորում է առարկաները, ներկայացված առարկաներից գտնում է ավելորդը 					
	<ul style="list-style-type: none"> • Գիտակցում է երևույթների պատճառահետևանքային կապերը, հաստատում տրամաբանական կապ տարբեր հասկացությունների միջև 					
	<ul style="list-style-type: none"> • Տալիս է բացատրություններ շրջապատող կյանքի և բնության երևույթների վերաբերյալ 					

	<ul style="list-style-type: none"> • Կարող է դրսևորել իրատեսական մոտեցում՝ հասկանալով որոշ երևույթների և իրավիճակների անհնարինությունը 					
	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է գտնել առարկաների ու երևույթների, նրանց հատկությունների կիրառման մի շարք տարբերակներ 					
	<ul style="list-style-type: none"> • Առարկաներն ու երևույթներն օգտագործում է ինչպես ըստ իրենց բուն նշանակության, այնպես էլ որպես փոխարինողներ 					
	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է շարունակել կիսատ թողած պատմությունը, վերնագրի շուրջ պատմություն հորինել, վերափոխել պատմությունը 					
	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է տարբերակել իրականն ու հորինվածը: 					

ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ

ՄԱՅՐԵՆԻ-1

ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զափանիչներ	Բնութագրիչներ		
	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ
<p>ա) Ճիշտ կարդալ</p>	<ul style="list-style-type: none"> ■ Կարդալիս բաց է թողնում վանկեր, բառերի վերջավորություններ, չի պահպանում ուղղախոսության կանոնները: ■ Չուգորդում է բառի առաջին հնչյունը նկարի հետ, սակայն դժվարանում է բոլոր հնչյունների տարրալուծման մեջ: 	<ul style="list-style-type: none"> ■ Կարդալիս բաց է թողնում տառեր, երբեմն խախտում է ուղղախոսության կանոնները, անհրաժեշտության դեպքում ուղղում է սեփական սխալները: ■ Առաջադրված բառերը տարրալուծում է վանկերի ու հնչյունների և արտասանում: 	<ul style="list-style-type: none"> ■ Ճշտորեն, մաքուր արտասանում է բառի բոլոր հնչյունները՝ պահպանելով ուղղախոսության կանոնները: ■ Առաջադրված տառային համադրություններով վանկեր ու բառեր է կազմում և կարդում:
<p>բ) Մահուն կարդալ</p>	<ul style="list-style-type: none"> ■ Կարդում է տառերով կամ վանկերով, թույլ է տալիս անհարկի դադարներ: ■ Չայնային ելևէջներով չի առանձնացնում կետադրական նշանները: 	<ul style="list-style-type: none"> ■ Կարդալիս պահպանում է համապատասխան դադարներ: ■ Հիմնականում ընթերցում է ամբողջական բառերով, սակայն դժվարանում է բազմավանկ բառերի ամբողջական ընթերցման մեջ: ■ Կարդալու տեմպը հետ է մնում խոսելու տեմպից: 	<ul style="list-style-type: none"> ■ Տեքստն ընթերցում է ամբողջական բառերով, կարդում է պատմվածքներ, բանաստեղծություններ՝ խոսելու տեմպին համահունչ: ■ Հայացքի մեկ ընդգրկումով կարող է ընթերցել ու ընկալել բառակապակցություններն ու նախադասությունները:

<p>գ) Հասկանալով կարդալ</p>	<p>Հետևում է ընթերցածի ընթացքին, վերարտադրում է ընթերցածի հիմնական միտքը օգնող հարցերի միջոցով:</p>	<ul style="list-style-type: none"> ■ Հասկանում է ընթերցածի հիմնական միտքը, բայց այն ինքնուրույն արտահայտում է ոչ պարզորոշ: ■ Կարդացածի բովանդակությունն ունկնդրին հաղորդում է անհրաժեշտ շեշտադրությամբ և դադարներով: ■ Ընթերցածի միտքը կարողանում է համադրել նկարի հետ: 	<ul style="list-style-type: none"> ■ Հասկանում է գլխավոր միտքը, հստակ արտահայտվում է այդ մասին և անում պարզ դատողություններ: ■ Կարողանում է կարդացածի բովանդակության և նկարագրողման միջոցով շարունակել պատմության ավարտը: ■ Ունի տեքստը շարունակելով և դերերով ընթերցելու կարողություն:
------------------------------------	---	--	--

ՄԱՅՐԵՆԻ-1

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Չափանիշներ	Բնութագրիչներ		
	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ
<p>ա) Բառիմաստի ճշտում և ընկալում</p>	<ul style="list-style-type: none"> ■ Տեքստից առանձնացնում է նորածանոթ բառը և հարցնում բացատրությունը: ■ Հանելուկների կամ նկարելուկների միջոցով կոահում է բառիմաստը: 	<ul style="list-style-type: none"> ■ Կռահում է տեքստում հանդիպած նորածանոթ բառի իմաստը: ■ Յուրացնում է դասագրքում բացատրված նորածանոթ բառերի իմաստները և օգտագործում սեփական խոսքում: 	<ul style="list-style-type: none"> ■ Կարողանում է օգտվել բառարանից՝ ճշտելու բառիմաստները և դրանք օգտագործում է բառակապակցությունների ու նախադասությունների մեջ:
<p>բ) Ակտիվ բառապաշար</p>	<ul style="list-style-type: none"> ■ Օգտագործում է հատկանիշ ցույց տվող բառեր՝ տեղը, չափը, գույնը և ձևը նկարագրելու համար: ■ Դժվարանում է նորածանոթ բառերը ակտիվ բառապաշարում կիրառելու հարցում: 	<ul style="list-style-type: none"> ■ Նորածանոթ բառերն օգտագործում է բառակապակցությունների մեջ: Խոսքում օգտագործում է իմաստային տարբեր խմբերի բառեր, լուծում է խաչբառեր և խառնագրեր: ■ Օգտագործում է լեզվական իրավիճակին համապատասխան բառեր ու բառակապակցություններ: 	<ul style="list-style-type: none"> ■ Խոսելիս դրսևորում է նկարագրական բառապաշար: ■ Հանգավոր բանաստեղծություններում կարողանում է բառեր փոխարինել: ■ Բառեր է ստանում «Բառքամոցի» խաղի օգնությամբ:
<p>գ) Կապակցված խոսք</p>	<ul style="list-style-type: none"> ■ Առաջադրված բառախմբերով կամ որոշակի թեմայով նախադասություններ է կազմում: ■ Մասնակցում է խոսակցությանը կամ զրույց է ստեղծում, հայտնում է անհամաձայնություն՝ առանց ընդհատելու ուրիշի խոսքը, չի շեղվում խոսակցության թեմայից: 	<ul style="list-style-type: none"> ■ Կապեր է ստեղծում իմացածի և նոր ձեռք բերած գիտելիքների միջև և կառուցում է բանավոր խոսք: ■ Վերարտադրում է դեպքեր և զրուցում հասակակիցների հետ: ■ Խմբային աշխատանքի ժամանակ դրսևորում է հարց տալու և տրված հարցերին պատասխանելու կարողություն, մասնակցում է կոնկրետ թեմայով քննարկումների: 	<ul style="list-style-type: none"> ■ Տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրում է սեփական մտքերը, բանավոր խոսք կառուցելիս արտահայտում է սեփական տպավորություններն ու տրամադրությունը: ■ Պատմություններ է հորինում՝ կրկնվող ծանոթ օրինաչափություններով: ■ Դրսևորում է կարևորն անհավանից տարբերակելու կարողություն:

ՄԱՅՐԵՆԻ-1

Չափանիշներ	Բնութագրիչներ		
	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ
ա) Վայելչագրական պահանջներ	<ul style="list-style-type: none"> ■ Ձեռքբերումներ ունի առաջին և երկրորդ տեղադրության (հիմնական և վերնի օժանդակ տողեր) տատերը գրելիս: ■ Հաճախ չի պահպանում տատերի թեքությունը, գրում է ջնջումներով: 	<ul style="list-style-type: none"> ■ Ձեռքբերումներ ունի առաջին, երկրորդ և երրորդ տեղադրության (ներքևի օժանդակ գիծ) տատերը գրելու հարցում: ■ Երբեմն թույլ է տալիս ջնջումներ: ■ Դժվարանում է տատերի կապակցելիության մեջ: 	<ul style="list-style-type: none"> ■ Ունի վայելուչ ձեռագիր, գրում է առանց ջնջումների, կապակցված գրությամբ:
բ) Հնչյունատառային վերլուծություն, բառակազմական կարողություններ	<ul style="list-style-type: none"> ■ Որոշում է տառի հնչյունային կազմությունը, մտովի վերլուծում և գրի առնում՝ պահպանելով վայելչագրական կանոնները: ■ Դրսևորում է տպագիր նախադասությունը ձեռագիր վերարտադրելու կարողություն: 	<ul style="list-style-type: none"> ■ Հնչյունատառային վերլուծությունից հետո շարժական տատերով կազմում է բառեր և գրի առնում: ■ Կազմում է բառի հնչյունային և վանկային գծապատկերներ: ■ Միացնում է հնչյուններն ու բառերի մասերը՝ 1-3 վանկանի բառեր ստեղծելու համար: 	<ul style="list-style-type: none"> ■ Բառի մեջ մտնող տատերի կամ վանկերի փոփոխությամբ նոր բառեր է կազմում: ■ Դրսևորում է «քանդված» բառեր հավաքելու կարողություն: ■ Բանավոր հանգավոր բառեր է ստեղծում:
գ) Ինքնուրույն գրավոր աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> ■ Արտագրում է բառեր, բառակապակցություններ՝ հիմնականում տառապատկերների ոչ ամբողջական ընկալումներով: ■ Տարածություն է թողնում բառերի միջև, կարողանում է բացատրել ուղղագրական պարզագույն կանոններ: 	<ul style="list-style-type: none"> ■ Արտագրում է բառեր, բառակապակցություններ, նախադասություններ՝ տառապատկերի ամբողջական ընկալումով: ■ Արտագրելիս պահպանում է մեծատառի գրությունը, ճիշտ է տեղադրում կետադրական նշանները: ■ Մտապահում և գրի է առնում ընկերոջ կազմած նախադասությունը: 	<ul style="list-style-type: none"> ■ Անսխալ արտագրում է մտքով իրար հետ կապված նախադասությունները: ■ Գրի է առնում ինքնուրույն կազմած նախադասությունը: Թելադրությամբ գրում է գրությամբ և արտասանությամբ տարբերություններ չունեցող բառեր և փոքրիկ տեքստ: ■ Դրսևորում է քառատողը ինքնաթելադրությամբ գրելու կարողություն:

ՄԱՅՐԵՆԻ-1

ԼՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Չափանիշներ	Բնութագրիչներ		
	1-ին խումբ	2- խումբ	3-րդ խումբ

Ուսուցիչ _____

Ա. Ա. Հ. (ստորագրություն)

Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա

Ի Դ Ա Ս Ա Ր Ա Ն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ		
	1-ԻՆ ԽՈՒՄԲ	2-ԸՆԴ ԽՈՒՄԲ	3-ԸՆԴ ԽՈՒՄԲ
<p>1. ԹՎԵՐ և ԹՎԱՐԱՆԱԿԱՆ գործողություններ ա) ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Գիտի. • 20-ի սահմաններում բնական թվերի անվանումները, գրելաձևերը, հաջորդականությունը, թվերի կազմությունը: Մակայն թվերի գրառումների, անվանումների և կազմության իմացության մեջ թույլ է տալիս կոպիտ սխալներ, որոնք ուղղվում են ուսուցչի կողմից:</p>	<p>Գիտի. • 20-ի սահմաններում բնական թվերի անվանումները, գրելաձևերը, հաջորդականությունը, առաջին և երկրորդ կարգի անվանումները, հաշվելու հիմնական կանոնը: Մակայն թույլ է տալիս ոչ կոպիտ առանձին սխալներ, կամ վրիպումներ, որի վրա ուշադրություն հրավիրելու դեպքում ինքը կարող է ուղղել:</p>	<p>Գիտի. • 20-ի սահմաններում բնական թվերի անվանումները, գրելաձևերը, հաջորդականությունը, առաջին և երկրորդ կարգի անվանումները հաշվելու հիմնական կանոնը:</p>

	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • 20-ի սահմաններում ուղիղ և հետ հաշվել 1-ական, 2-ական • որոշել տրված թվի անմիջապես հաջորդ կամ անմիջապես նախորդ թիվը • համեմատել թվերը. • սակայն 20-ի սահմաններում ուղիղ և հետ հաշվելիս, կամ թվերը համեմատելիս և համեմատման արդյունքները գրանցելիս թույլ է տալիս առանձին կոպիտ սխալներ, որոնք ուղղվում են ուսուցչի կողմից: 	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • 20-ի սահմաններում ուղիղ և հետ հաշվել 1-ական, 2-ական, 5-ական, 10-ական • որոշել տրված թվի անմիջապես հաջորդը կամ անմիջապես նախորդ թիվը • համեմատել թվերը և արդյունքները գրանցել նշանների օգնությամբ: Մակայն համեմատելիս, կամ թվերի համեմատման արդյունքները գրանցելիս թույլ է տալիս ոչ կոպիտ առանձին սխալներ, որոնք ի վիճակի է ուղղել: 	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • ճիշտ հաշվել ուղիղ և հետ 1-ական, 2-ական, 5-ական, 10-ական • ճիշտ որոշել՝ մինչև 20-ը տրված բնական թիվը ո՞ր թվին է նախորդում և ո՞ր թվին է հաջորդում • համեմատել թվերը և արդյունքը անսխալ գրանցել նշանների միջոցով • համեմատել միանիշ թվերը և պարզել՝ մեկը մյուսից ինչքանով է մեծ կամ փոքր:
<p>բ) Գումարում և հանում 20-ի սահմաններում</p>	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> • Գումարման և հանման բաղադրիչների և արդյունքների անվանումները • գումարման գործողության տեղափոխական հատկությունը • միանիշ թվերի գումարման աղյուսակը: Մակայն նշված գիտելիքների իմացության մեջ թույլ է տալիս կոպիտ սխալներ, անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ 	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> • գումարման և հանման գործողությունների իմաստները • գումարման և հանման բաղադրիչների և արդյունքների անվանումները • գումարման գործողության տեղափոխական հատկությունը • միանիշ թվերի գումարման աղյուսակը • թվին 1, 2, 3, 4 գումարելու և թվից 1, 2, 3, 4 հանելու հնարները • թվերը տարբեր հերթականությամբ գումարելու եղանակները: Մակայն նշված գիտելիքների իմացության մեջ թույլ է տալիս ոչ կոպիտ առանձին սխալներ կամ անճշտություններ, որոնք կարողանում է հեշտությամբ ուղղել: 	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> • Գումարման և հանման գործողությունների իմաստները • գումարման և հանման բաղադրիչների և արդյունքների անվանումները • գումարման գործողության տեղափոխական հատկությունը • միանիշ թվերի գումարման աղյուսակը • թվին 1, 2, 3, 4 գումարելու և թվից 1, 2, 3, 4 հանելու հնարները • թվերը տարբեր հերթականությամբ գումարելու եղանակները • գումարման և հանման գործողությունների կապը

	<p><i>Գարողանում է.</i></p> <ul style="list-style-type: none"> • 20-ի սահմաններում կատարել գումարում և հանում առանց կարգային անցումների • կոպիտ սխալներ է թույլ տալիս, կարգային անցումներով գումարում և հանում կատարելիս • գումարման և հանման գործողություններ է կատարում թվային ճառագայթի օգնությամբ, սակայն այստեղ ևս թույլ է տալիս կոպիտ սխալներ: 	<p><i>Գարողանում է.</i></p> <ul style="list-style-type: none"> • 20-ի սահմաններում կատարել գումարում և հանում` <p>ա) առանց կարգային անցումների,</p> <p>բ) կարգային անցումներով</p> <ul style="list-style-type: none"> • թվային ճառագայթի օգնությամբ կատարել գումարում և հանում • գումարման և հանման գործողություններ կատարել` օգտվելով եռանկյունաձև և քառակուսային աղյուսակներից: <p>Սակայն թույլ է տալիս ոչ կոպիտ առանձին սխալներ կարգային անցումներով հաշվումներ կատարելիս, կամ եռանկյունաձև և քառակուսային աղյուսակներով գումարում և հանում կատարելիս, որոնք ի վիճակի է ինքնուրույն ուղղել:</p>	<p><i>Գարողանում է.</i></p> <ul style="list-style-type: none"> • 20-ի սահմաններում ճիշտ և բավականին արագ կատարել գումարում և հանում` <p>ա) առանց կարգային անցումների,</p> <p>բ) կարգային անցումներով և գործողությունները գրառել թվանշանների և գործողության նշանների միջոցով:</p> <ul style="list-style-type: none"> • թվային ճառագայթի օգնությամբ անսխալ կատարել գումարման և հանման գործողություններ • անսխալ օգտվել գումարման եռանկյունաձև և քառակուսային աղյուսակներից • հայտնաբերել գումարման և հանման գործողությունների լուծման մեջ թույլ տրված սխալները:
--	---	---	---

<p>2. Մեծություններ</p>	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> Մեծությունների չափման միավորներից՝ սանտիմետրը, դեցիմետրը, կիլոգրամը, լիտրը, ժամը, բայց հաճախ շփոթում է, թե դրանցից յուրաքանչյուրը որ մեծության չափման միավորն է, թույլ է տալիս կոպիտ սխալներ: 	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> երկարության չափման միավորներից՝ սանտիմետրը, դեցիմետրը, գանգվածի չափման միավորներից՝ կիլոգրամը, տարողության չափման միավորներից՝ լիտրը, ժամանակի չափման միավորներից՝ ժամը: 	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> երկարության չափման միավորներից՝ սանտիմետրը, դեցիմետրը, գանգվածի չափման միավորներից՝ կիլոգրամը, տարողության միավորներից՝ լիտրը, ժամանակի չափման միավորներից՝ ժամը:
	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> կատարել կշռումներ, չափումներ, բայց հաճախ դժվարանում է համեմատել չափել ու կառուցել հատվածներ, որոշել ժամանակը մեկ ժամի ճշտությամբ ճիշտ կատարել գրառումները: 	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> նշված չափման միավորներով կատարել չափումներ, սակայն առանձին դեպքերում և չափումներում և արդյունքի գրանցման մեջ թույլ է տալիս ոչ կոպիտ սխալներ, որոնք ի վիճակի է ուղղել: 	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> Այդ չափման միավորներով ճշգրիտ կատարել պարզագույն չափումներ՝ <ul style="list-style-type: none"> ➢ համեմատել չափել ու կառուցել հատվածներ ➢ որոշել ժամանակը մեկ ժամի ճշտությամբ օգտվել նժարավոր կշեռքից ու կշռաքարերից ➢ չափել դույլի տարողությունը և արդյունքները ճիշտ գրանցել:

<p>Երկրաչափական նախագիտելիքներ</p>	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • ճանաչել և անվանել ծրագրով պահանջվող երկրաչափական մարմինների և պատկերների մի մասը՝ գունդ, խորանարդ, գլան, եռանկյուն, շրջան, ուղղանկյուն, քառակուսի, բայց երբեմն էլ շփոթում է դրանց անվանումները • կառուցել տարբեր երկրաչափական պատկերներ՝ հատված, ուղղանկյուն, սակայն և՛ չափումներում և՛ կառուցման մեջ թույլ է տալիս կոպիտ սխալներ: 	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • ճանաչել և անվանել ծրագրով պահանջվող երկրաչափական մարմիններն ու պատկերները, սակայն առանձին դեպքերում կարող է շփոթել դրանք • կառուցել տարբեր երկրաչափական պատկերներ, սակայն կարող է թույլ տալ ոչ կոպիտ սխալներ, որը նշելու դեպքում կարող է անմիջապես ինքնուրույն ուղղել: 	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • հստակ ճանաչել և անվանել երկրաչափական մարմինները՝ խորանարդը, ուղղանկյունանիստը, գունդը, քառանիստը, կոնը, գլանը • ճանաչել և ճիշտ անվանել երկրաչափական պատկերները՝ կետը, գիծը, հատվածը, ճառագայթը, եռանկյունը, քառանկյունը, հնգանկյունը, բազմանկյունը, շրջանը • ճիշտ կառուցել տարբեր երկրաչափական պատկերներ:
<p>Պարզ խնդիրներ</p>	<p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • առանձնացնել խնդրի պայմանը և պահանջը • որոշ դժվարությամբ լուծել գումարման և հանման վերաբերյալ պարզ խնդիրներ • օգտագործելով թվերը և մեծությունները՝ ուսուցչի օգնությամբ կազմել խնդիրներ 	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> • խնդրի բաղադրիչները <p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • առանձնացնել խնդրի պայմանը և պահանջը, նկատել պայմանի և պահանջի միջև եղած կապը: Առանձին դեպքերում խնդիրները լուծելիս տալիս է ոչ լրիվ ճշգրիտ բացատրություն (լուծման ճիշտ ընթացքի դեպքում ևս) 	<p>Գիտի.</p> <ul style="list-style-type: none"> • խնդրի բաղադրիչները <p>Կարողանում է.</p> <ul style="list-style-type: none"> • ճիշտ առանձնացնել խնդրի պայմանը և պահանջը, նկատել պայմանի և պահանջի միջև եղած կապը, հիմնավորել խնդրի լուծման ճշտությունը՝ բացատրելով կատարած գործողությունը

		<ul style="list-style-type: none"> • թվերը և մեծությունները օգտագործել պարզագույն խնդիրներ լուծելիս • կազմել և լուծել 2 թվերի գումարը, տարբերությունը, գտնելու, թիվը մի քանի միավորով մեծացնելու, փոքրացնելու վերաբերյալ խնդիրներ: Սակայն երբեմն թույլ է տալիս ոչ կոպիտ սխալներ • կազմել խնդիրներ տրված պայմանով, կամ տրված հարցով • լուծել հետաքրքրաշարժ խնդիրներ: Այստեղ ևս կարող է թույլ տալ սխալներ: Այս թերությունները կարող է հեշտությամբ ուղղել ուսուցչի աննշան օգնության դեպքում: 	<ul style="list-style-type: none"> • թվերը և մեծությունները օգտագործել կիրառական պարզագույն խնդիրներ լուծելիս • կազմել և լուծել 2 թվերի գումարը, տարբերությունը գտնելու, թիվը մի քանի միավորով մեծացնելու, փոքրացնելու վերաբերյալ խնդիրներ • հայտնաբերել խնդրի լուծման մեջ թույլ տված սխալները • տված պայմանով կամ հարցով ձևակերպել խնդիր • լուծել կոահունակություն պահանջող պարզ խնդիրներ:
--	--	---	--

26 Մ/1-9

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ _____ ԱՄՍԱԹԻՎ _____

ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ու ս ու մ ն ա կ ա ն ձ ե ո ք ք ե ր ու մ ն ե ր				
Թվեր և թվաբանական գործողություններ		Մեծություններ	Երկրաչափական նախագիտելիքներ	Պարզ խնդիրներ
ա) Թվարկություն (20-ի սահմաններում)	բ) Գումարում և հանում (20-ի սահմաններում)			

Ուսուցիչ _____

Ա. Ա. Հ. (ստորագրություն)

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Ի ԴԱՍԱՐԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ		
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԸ	I ԽՈՒՄԲ	II ԽՈՒՄԲ	III ԽՈՒՄԲ
<p>ԱՇԽԱՏԱՆՔ ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ</p>	<ul style="list-style-type: none"> Կարողանում է տարբերել օգտագործվող բնական և արհեստական նյութերը ուսուցչի օգնությամբ Պասիվություն է ցուցաբերում քննարկումների ժամանակ Աշխատանքի համար նյութը նախապատրաստում է ուսուցչի միջամտությամբ Ուսուցչի կրկնակի ցուցադրումով կատարում է աշխատանքի տեխնոլոգիական քայլերը Ժամանակին չի ավարտում աշխատանքը Թույլ է տալիս որոշակի անճշտություններ 	<ul style="list-style-type: none"> Ինքնուրույն տարբերում է բնական և արհեստական նյութերը Նյութը նախապատրաստում է ուսուցչի հուշումով Երբեմն զգում է ուսուցչի միջամտության կարիքը Աշխատանքը ավարտում է ժամանակին չնչին թերություններով 	<ul style="list-style-type: none"> Առաջադրանքին համապատասխան ընտրում է նյութը Ակտիվ մասնակցում է քննարկումներին, հայտնում սեփական կարծիքը Նյութը նախապատրաստում է ինքնուրույն Աշխատում է առանց միջամտության Աշխատանքը ավարտում է ժամանակին և անթերի Պահպանում է անվտանգության կանոնները
<p>ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՎ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԲՈՒՅՄԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ</p>	<ul style="list-style-type: none"> Ճանաչում է սենյակային և դեկորատիվ բույսերի որոշ տեսակներ Թվարկում է բույսերի պահպանման առանձնահատկությունները ուսուցչի օգնությամբ Բույսերի ցանքսի համար հողը նախապատրաստում է ուսուցչի միջամտությամբ 	<ul style="list-style-type: none"> Կարևորում է բույսերի դերը մարդու կյանքում, գիտի խնամքի կանոնները Բացատրում է լուսային, ջերմային, խոնավության կարևորությունը բույսերի աճի համար Ցանքսի համար հողը նախապատրաստում է, ցանում է ուսուցչի հուշումով 	<ul style="list-style-type: none"> Ինքնուրույն խնամում է սենյակային բույսերը Կազմակերպում է դիտարկումներ բույսերի աճի վերաբերյալ Հողը նախապատրաստում, ցանում և խնամում է ինքնուրույն

<p>ԱՇԽԱՏԱՆՔ ԹՂԹՈՎ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՂԹՈՎ</p>	<ul style="list-style-type: none"> • Ճանաչում է թղթի որոշ տեսակներ, սակայն դրանց հատկությունները ներկայացնում է ուսուցչի միջամտությամբ • Գիտի աշխատանքային գործիքների անվանումները, օգտագործում է ուսուցչի օգնությամբ • Աշխատանքի ավարտին թուղթը ունի անփույթ տեսք • Աշխատանքը պատված է ստանձի հետքերով և սև բծերով 	<ul style="list-style-type: none"> • Գիտի թղթի հատկությունները և կիրառման ոլորտները • Պահպանում է գործիքներով աշխատելու անվտանգության կանոնները • Աշխատանքը կատարում է ինքնուրույն, բայց ճմրթված է • Աշխատանքի վրա կան ստանձի փայլուն հետքեր 	<ul style="list-style-type: none"> • Տեղյակ է թղթի ստացման եղանակներին: • Առաջադրանքին համապատասխան ընտրում է թղթի տեսակը • Աշխատանքային գործիքները օգտագործում է ըստ նշանակության • Առաջարկում է աշխատանքի կատարման սեփական տարբերակ • Աշխատելիս չի վնասում թուղթը • Աշխատանքը կատարում է ինքնուրույն, մաքուր, առանց ստանձի հետքերի
--	---	--	--

<p>ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԱՐԴԵՐ</p>	<ul style="list-style-type: none"> • Տարբերում է տիպային դետալները, անշարժ և շարժական միացումները հավաքում է ուսուցչի օգնությամբ • Օգտվելով նմուշից կամ տեխնիկական նկարից հավաքում է մոդելներ ուսուցչի միջամտությամբ 	<ul style="list-style-type: none"> • Ինքնուրույն, որոշ շեղումներով հավաքում է շարժական և անշարժ միացումներ • Ըստ նկարի կամ նմուշի տրված ժամանակահատվածում, ինքնուրույն հավաքում է պարզագույն մոդելներ 	<ul style="list-style-type: none"> • Ժամանակին, ինքնուրույն կատարում է անշարժ և շարժական միացումներ • Ինքնուրույն փոփոխություն է կատարում շինվածքի կառուցվածքում • Կարողանում կատարել թիմային աշխատանք
-------------------------	--	---	---

Empty cell for the third row

<p>ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ</p>	<ul style="list-style-type: none"> • Ճանաչում է թելերի և գործվածքների տեսակները, տարբերում է ուսուցչի օգնությամբ • Գործվածքի վրա թելի ամրացման եղանակի ընտրությունը կատարում է ուսուցչի օգնությամբ • Գործվածքի վրա գծանշում կատարում է որոշակի շեղումներով 	<ul style="list-style-type: none"> • Տարբերում է թելերի և գործվածքների տեսակները, գիտի դրանց նշանակության մասին • Թելի ամրացման եղանակի ընտրությունը կատարում է ուսուցչի փոքր հուշումով • Ինքնուրույն, առանց թերությունների կատարում է գծանշում 	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է համեմատել թելերը և գործվածքները ըստ տեսակների • Թելի ամրացման եղանակի ընտրությունը կատարում է ինքնուրույն • Գծանշում կատարում է ինքնուրույն, կիրառում է տարբեր եղանակներ
<p>ԿԵՆՑԱԴ</p>	<ul style="list-style-type: none"> • Գիտի սպասքի նշանակության մասին, դրանցից օգտվելու կանոնները • Թելի և սուրճի սեղանի սպասքադրումը կատարում է ուսուցչի օգնությամբ 	<ul style="list-style-type: none"> • Պաշտպանում է սեղանի շուրջ պահանջվող վարվելակերպի կանոնները • Սեղանի սպասքադրումը կատարում է ուսուցչի փոքր հուշումով 	<ul style="list-style-type: none"> • Գիտի և կիրառում է հյուրերի ընդունման կանոնները • Սեղանի սպասքադրումը կատարում է ինքնուրույն

Ձե Ա/1-Գ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ _____ ԱՄՍԱԹԻՎ _____

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Աշխատանք բնական և արհեստական նյութերով	Ծաղիկների և դեկորատիվ բույսերի աճեցում	Աշխատանք թղթով և ստվարաթղթով	Տեխնիկայի տարրեր	Աշխատանք մանածագործական նյութերով	Կենցաղ

Ուսուցիչ _____

ԿԵՐՊԱՐՎԵՍ

I ԴԱՍԱՐԱՆ

ԹԵՄԱՏԻԿ ԱՇԽԱՏԱՆՔ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ		
	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԸ	I ԽՈՒՄԲ	II ԽՈՒՄԲ
Առաջարկվող թեմայի պատկերում	<ul style="list-style-type: none"> • Միտքն արտահայտում է որոշ չափով, պատկերում է թեմատիկ փոքր հատված, • Օգտագործում է թղթի մակերեսի 1/3-ը, • Գունավորում է հորինվածքի փոքր մասը, • Աշխատանքը սկսում է միայն ուսուցչի միջամտությունից հետո: 	<ul style="list-style-type: none"> • Միտքն արտահայտում է որոշ չափով, թեման պատկերում է առանց դժվարանալու, • Օգտագործում է թղթի 50%-ը, • Գունավորում է հորինվածքի մեծ մասը, • Աշխատում է ուսուցչի փոքր հուշումներով: 	<ul style="list-style-type: none"> • Միտքն արտահայտել է հետաքրքիր, թեման պատկերել է հեշտությամբ, • Օգտագործում է թղթի ամբողջ մակերեսը, • Գունավորում է թղթի ամբողջ մակերեսը, • Աշխատում է ինքնուրույն:
Ընթերցված թեմայի նկարագրողում (հեքիաթի, պատմվածքի ձևավորում)	<ul style="list-style-type: none"> • Պատկերում է հերոսներից 1-2-ին. • Պատկերվող հատվածն ընտրում է ուսուցչի միջամտությամբ, • Օգտագործում է թղթի մակերեսի 1/3-ը, • Գունավորում է հորինվածքի փոքր մասը, • Աշխատանքը սկսում է միայն ուսուցչի միջամտությունից հետո: 	<ul style="list-style-type: none"> • Պատկերում է հերոսներին. • Պատկերվող հատվածն ընտրում է ուսուցչի հուշումից հետո, • Օգտագործում է թղթի 50%-ը, • Գունավորում է հորինվածքի մեծ մասը, • Աշխատում է ուսուցչի փոքր հուշումներով: 	<ul style="list-style-type: none"> • Ազատ պատկերում է հերոսներին և միջավայրը, • Պատկերվող հատվածն ընտրում է ինքնուրույն, • Գունավորում է թղթի ամբողջ մակերեսը, • Աշխատում է ինքնուրույն:
Թեմայի ինքնուրույն ընտրություն (ազատ թեմա)	<ul style="list-style-type: none"> • Չի կողմնորոշվում թեմայի ընտրության մեջ, • Ոգևորությամբ չի աշխատում, • Վախենում է թղթի մակերեսից, • Աշխատանքը սկսում է միայն ուսուցչի միջամտությունից հետո: 	<ul style="list-style-type: none"> • Թեման ընտրում է ուսուցչի օգնությամբ, • Աշխատում է զգուշությամբ, • Թղթի մակերեսը օգտագործում է ուսուցչի հուշումով: 	<ul style="list-style-type: none"> • Թեման ընտրում է ինքնուրույն, • ոգևորությամբ, • Աշխատում է ինքնուրույն, հաճույքով, • Գունավորում է թղթի ամբողջ մակերեսը:

ԲՆՕՐԻՆԱԿԻՑ ՊԱՏԿԵՐՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ			
	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԸ	I ԽՈՒՄԲ	II ԽՈՒՄԲ	III ԽՈՒՄԲ

<p>Ցուցադրվող առարկայի պատկերում</p>	<ul style="list-style-type: none"> • Առարկան պատկերում է նմանությամբ, առանց միջավայրի, • Օգտագործում է թղթի մակերեսի 1/3-ը, • Առարկան թղթի մեջ ճիշտ չի կարողանում կառուցել, պատկերում է փոքր չափերով, • Գույնով աշխատում է դժվարությամբ, • Աշխատանքը սկսում է միայն ուսուցչի միջամտությունից հետո: 	<ul style="list-style-type: none"> • Պատկերվող առարկան մասամբ կառուցված է, • Նշմարվում է միջավայրը, • Օգտագործում է թղթի 50%-ը, • Առարկան թղթի մեջ կառուցում է մոտավոր չափերով, • Պատկերը գունավորում է ճշտությամբ, • Աշխատում է ուսուցչի փոքր հուշումներով: 	<ul style="list-style-type: none"> • Պատկերվող առարկան ամբողջությամբ կառուցված է, • Միջավայրը ներկայացված է լիարժեք, • Օգտագործում է թղթի ամբողջ մակերեսը, • Առարկան (ները) կառուցում է ճիշտ չափերով, • Պատկերը գունավորում է ստեղծագործաբար, օգտագործում է թղթի ամբողջ մակերեսը, • Աշխատում է ինքնուրույն:
<p>Բնանկարի պատկերում</p>	<ul style="list-style-type: none"> • Պատկերում է բնանկարի մի փոքր հատվածը, • Օգտագործում է թղթի մակերեսի 1/3-ը, • Թղթի մեջ բնապատկերը կառուցում է մոտավորապես, • Օգտագործում է աղքատ գունային գամմա: 	<ul style="list-style-type: none"> • Պատկերում է բնանկարի որոշակի հատվածը, • Թղթի մեջ պատկերը կառուցում է մոտավորապես, • Նկատելի են ստեղծագործական կարողությունները: 	<ul style="list-style-type: none"> • Ընտրում է բնապատկերի առավել հետաքրքիր հատվածը, • Թղթի մեջ պատկերը կառուցում է ճիշտ, • Գունային գամման հարուստ է, • Երևում է ստեղծագործական աշխատանքը:
<p>Մարդու պատկերում (դիմանկար)</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործում է թղթի 1/3-ը, • Աշխատանքը ճիշտ չի կառուցում, • Թղթի դիրքի ընտրությունը չի պատճառաբանում, • Աշխատում է ուսուցչի օգնությամբ: 	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքը կառուցել է թղթի մեջ, • Նշմարվում է պատկերվող օբյեկտի հետ նմանությունը, • Կարողանում է պատճառաբանել թղթի դիրքի ընտրությունը: • Աշխատում է ինքնուրույն ուսուցչի փոքր հուշումներով: 	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքը ճիշտ կառուցել է թղթի մեջ, • Պատկերվող օբյեկտի հետ նմանությունը ճշգրիտ է, • Կարողանում է պատճառաբանել թղթի դիրքի ընտրությունը, • Աշխատում է ինքնուրույն, • Օգտագործում է գուններանգներ:

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ		
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԵՎԸ	I ԽՈՒՄԲ	II ԽՈՒՄԲ	III ԽՈՒՄԲ

<p>Դեկորատիվ աշխատանքի կատարում</p>	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքը կատարում է մոտավոր, • Պատկերում է միայն ուսուցչի ներկայացրած օրինակը, • Պատկերված գծերը (նախշերը) անկանոն են, • Գունավորում է մեխանիկորեն աշխատում է դժվարությամբ, • Աշխատանքը սկսում է միայն ուսուցչի միջամտությունից հետո: 	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքը կատարում է ճշգրիտ, • Պատկերում է ուսուցչի ներկայացրած օրինակը, • Պատկերված գծերը (նախշերը) կանոնավոր են, ճշգրիտ, • Աշխատանքը սկսում է միայն ուսուցչի հուշումից հետո, • Պատկերը գունավորում է ճշտությամբ: 	<ul style="list-style-type: none"> • Բացի հանձնարարվածից կատարում է լրացուցիչ ստեղծագործական աշխատանք, • Պատկերված գծերը (նախշերը) կանոնավոր են, ճշգրիտ և համաչափ, • Գույների ընտրությանը մոտենում է ստեղծագործաբար, • Աշխատում է ինքնուրույն:
-------------------------------------	--	--	--

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՇՈՒՐՁ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ		
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԸ	I ԽՈՒՄԲ	II ԽՈՒՄԲ	III ԽՈՒՄԲ
<p>Աշխատանքի շուրջ զրույց</p>	<ul style="list-style-type: none"> • Մասնակցում է խոսակցությանը կամ զրույց է ստեղծում, հայտնում է անհամաձայնություն՝ առանց ընդհատելու ուրիշի խոսքը, չի շեղվում խոսաբանության թեմայից, • Հազվադեպ է հայտնում սեփական կարծիքը: 	<ul style="list-style-type: none"> • Դրսևորում է հարց տալու և տրված հարցին պատասխանելու կարողություն, • Մասնակցում է քննարկումներին, • Երբեմն հայտնում է սեփական կարծիքը, • Ստեղծագործությունը ներկայացնելիս օգտագործում է համապատասխան բառապաշար: 	<ul style="list-style-type: none"> • Տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրում է սեփական մտքերը, տպավորությունները, տրամադրությունները, • Ակտիվ մասնակցում է քննարկումներին, • Հաճույքով հայտնում է սեփական կարծիքը, • Ստեղծագործությունը ներկայացնելիս օգտագործում է հարուստ բառապաշար:

Ձև Կ/1-Գ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ _____ ԱՄՍԱԹԻՎ _____

ՍՈՎՈՐՈՂԻ «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԲՆՈՒԹԱԳՐԻ

Ու ս ու մ ն ա կ ա ն ձ ե ո ք ք ե ր ու մ ն ե ր			
ԹԵՄԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ	ԲՆՕՐԻՆԱԿԻՑ ՊԱՏԿԵՐՈՒՄ	ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ	ԶՐՈՒՅՑՆԵՐ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՇՈՒՐՁ

Ուսուցիչ _____

Ա. Ա. Հ. (ստորագրություն)

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

I ԴԱՍԱՐԱՆ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ		
	I	II	III
	Երգը կատարում է հուզական:	Երգը կատարում է հուզական, ճիշտ դրվածքով:	Երգը կատարում է հուզական, ճիշտ դրվածքով և մաքուր ինտոնացիայով:
	Ցուցադրում է ձեռքի նշաններով հնչյունաշարի ձայնաստիչանները:	Երգում է ձեռքի նշաններով առանց նոտաների:	Երգում է ձեռքի նշաններով ժողովրդական մանկական երգեր:
	Ունկնդրում է երաժշտական ստեղծագործությունը և որոշում բնույթը:	Կարողանում է որոշել բնույթը և տրամադրությունը, մասերը	կարողանում է ինքնուրույն հետևություններ անել ունկնդրած երաժշտության վերաբերյալ:
	Մարմնի շարժումներով վերարտադրում է երաժշտության բնույթը:	Մարմնի շարժումներով վերարտադրում է երաժշտության բնույթը, բովանդակությունը:	Մարմնի շարժումներով արտահայտում է երաժշտական ստեղծագործության բնույթը բովանդակությունը, կատարում է պարային շարժումներ
	Կարողանում է ավարտել կիսատ թողած մեղեդին:	Կարողանում է տրված մեղեդու վրա հորինել պարային շարժումներ	Կարողանում է տրված ոտանավորի վրա հորինել համապատասխան մեղեդի:

Կարողանում է ռիթմական նվագարաններով վերարտադրել երգերի ռիթմական պատկերը:	Կարողանում է ռիթմական նվագարաններով նվագակցել երգերին:	Կարողանում է մեղեդային նվագարաններով նվագակցել երգերին:
Գիտի կարճ և երկար հնչյունների տևողությունները:	Գիտի քառորդ և ութերորդական տևողությունների բառային անունները:	Գիտի երաժշտության մեջ համաչափ զարկերը, տեմպը, մեներգիչ, երգչախումբ հասկացողությունները

Ձև Ե/1-Գ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ _____ ԱՄՍԱԹԻՎ _____

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ուսումնական ձեռքբերումներ				
Գործունեության տեսակներ				
Երգեցողություն	Երաժշտության ունկնդրում	Երաժշտառիթմական շարժում, պար, խաղ	Իմպրովիզացիա	Նվագ մանկական նվագարաններով

Ուսուցիչ _____

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ

I ԴԱՍԱՐԱՆ

Չափանիշներ	Բնութագրիչներ		
1. Մարմնամարզական վարժությունների կատարման կարողություններ			
	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ
1) Շարային վարժությունների կատարում	<ul style="list-style-type: none"> • Շարվում է տողանով և շարքով, կատարում է «Շարվել», «Ցրվել» հրահանգները, • շարափոխվում է տողանից՝ շրջանի, կից քայլերով կարողանում է բացազատվել և խտանալ: 	<ul style="list-style-type: none"> • Շարվում է տողանով և շարքով, կատարում «Շարվել», «Ցրվել», «Քայլով մարշ», «Կանգ առ» հրահանգները, • տողանից շարափոխվում է շրջանի, • կատարում է տեղում դարձումներ՝ աջ և ձախ: 	<ul style="list-style-type: none"> • Հստակորեն կատարում է շարային հրահանգները, • շարափոխվում է տողանից շրջանի, միասյունից՝ երկսյունի, • կատարում է դարձումներ՝ աջ և ձախ, կարողանում է կից քայլերով բացազատվել և խտանալ:
2) Ընդհանուր զարգացնող վարժությունների կատարում	<ul style="list-style-type: none"> • Կատարում է ձեռքերի հիմնական դրությունները՝ առաջ, կողմ, վեր, գոտկատեղին, ուսին, գլխին, և ոտքերի հիմնական դրությունների հիմնական կանգ, կանգ՝ ոտքերը գատած, • կատարում է իրանի թեքումներ՝ աջ և ձախ: 	<ul style="list-style-type: none"> • Կատարում է ձեռքերի և ոտքերի հիմնական դրությունները և շարժումները, իրանի թեքումները՝ առաջ, հետ, աջ և ձախ, • կատարում է ընդհանուր զարգացնող վարժությունների մեկ համալիր՝ պահպանելով ճիշտ կեցվածքը: 	<ul style="list-style-type: none"> • Ճիշտ և հստակորեն կատարում է ձեռքերի, ոտքերի, իրանի, հիմնական շարժումները, կատարել ընդհանուր զարգացնող վարժության համալիրներ (5-6 վարժություն)՝ առանց ստարկաների, օղով կամ գնդակով, • կարողանում է շարժումները համաձայնեցնել և կատարել ճիշտ կեցվածքով:
3) Մազլցման և հավասարակշռության պահպանման կարողություններ	<ul style="list-style-type: none"> • Մազլցում է մարզանստարանի վրայով, • կանգնել ոտնաթաթերի և մեկ ոտքի վրա: 	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է մազլցել և սողանցել մարզանստարանի վրայով, • կարողանում է մարզանստարանի վրա քայլել ոտնաթաթերին և կանգնել մեկ ոտքի վրա: 	<ul style="list-style-type: none"> • Մազլցում է մարզանստարանի վրայով, • մազլցում է մարզապատի վրայով՝ վեր և վար, • կարողանում է մարզանստարանի վրա կանգնել ոտնաթաթերին և քայլել ձեռքերի սարբեր դիրքերով:

<p>4) Ակրոբատիկ վարժությունների կատարում</p>	<ul style="list-style-type: none"> • Կատարում է հենում՝ կքանիստ, հենում՝ պառկած դրություն, • գլորվում է խմբավորված: 	<ul style="list-style-type: none"> • Գլորվում է խմբավորված՝ փորին պառկած և ծնկներին հենված դրությամբ: 	<ul style="list-style-type: none"> • Հստակորեն՝ կքանիստ դրությունից գլորվում է առաջ:
<p>5) Ռիթմիկ-մարմնամարզական, պարային վարժությունների և շարժումների կատարում</p>	<ul style="list-style-type: none"> • Երաժշտության ուղեկցությամբ կատարում է քայլեր, թեթև վազքեր, դուփյուններ, ցատկեր, • շարժվում է շրջանաձև և կից քայլերով: Ձեռքերը բարձրացնել վեր, կողմ, առաջ: 	<ul style="list-style-type: none"> • Երաժշտության ուղեկցությամբ քայլել, վազել, ցատկել, շարժվել շրջանաձև, կից քայլերով, կքանստելով, • ձեռքերը բարձրացնում է վեր և կողմեր, պահում է մեջքի հետևում, կատարում իրանի թեքումներ՝ աջ և ձախ: 	<ul style="list-style-type: none"> • Երաժշտության ռիթմին և տեմպին համապատասխան կատարում է շարժումներ, շարժվում շրջանաձև և կքանստելով, • կատարում է դաստակների պտույտներ, իրանի թեքումներ և դարձումներ, • կատարում է կից քայլք՝ մի ոտքի կրունկը դնելով մյուսի թաթի մոտ, կից քայլք՝ կքանստելով:

2. Աթլետիկական վարժությունների կատարման կարողություններ

<p>1) Քայլքի և վազքի կատարում</p>	<ul style="list-style-type: none"> • Կատարում է սովորական քայլք, քայլք՝ ոտնաթաթերին և կրունկների վրա: • կարողանում է վազքը հերթագայել քայլքով (10 մ՝ վազք 10 մ՝ քայլք): 	<ul style="list-style-type: none"> • քայլում է ոտնաթաթերի, կրունկների վրա՝ ձեռքերի տարբեր դիրքերով, • կարողանում է ճիշտ կեցվածքով վազել միջին տեմպով մինչև 1 րոպե: 	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է ճիշտ կեցվածքով քայլել և վազել՝ համաձայնեցնելով շարժումները շնչառության հետ, • վազում է միջին տեմպով՝ մինչև 2 րոպե, • կատարում է մաքրավազք՝ 2 x 10 մ:
<p>2) Ցատկերի և նետումների կատարում</p>	<ul style="list-style-type: none"> • Ցատկում է ցատկապարանով, կարողանում է տեղից հեռացատկել, բարձրացատկել, • փոքր գնդակը նետում է նշանակետին՝ 3-4 մ հեռավորությունից: 	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է տեղից հեռացատկել, բարձրացատկել մեկ ոտքի հրումով (40 սմ բարձրությունը), • փոքր գնդակը նետում է նշանակետին՝ 4-5 մ հեռավորությունից, մեծ գնդակներով կատարում փոխանցում և ընդունում: 	<ul style="list-style-type: none"> • Կարողանում է հստակորեն տեղից հեռացատկել, բարձրացատկել հաղթահարելով 50 սմ բարձրությունը, • փոքր գնդակը նետում է նշանակետին 5-6 մ հեռավորությունից, մեծ գնդակը փոխանցում է և ընդունում:

3. Շարժախաղերի կատարման կարողություններ

Empty content area for section 3

<p>Շարժախաղերի կատարում</p>	<ul style="list-style-type: none"> • Աշակերտները իմանում են յուրացված շարժախաղերի անվանումները, կարողանում խաղալ որոշ կանոնների պահպանումով, խաղերի ժամանակ դրսևորում համարձակություն, արագաշարժություն, ընկերասիրություն: 	<ul style="list-style-type: none"> • Իմանում են սովորած շարժախաղերի կանոնները, կարողանում խաղալ պահպանելով կանոնները, • շարժախաղերի ժամանակ կարողանում են դրսևորել ինքնավստահություն, ճարպկություն, արագաշարժություն, փոխօգնություն և ուշադրության կենտրոնացում: 	<ul style="list-style-type: none"> • Կարողանում են խաղալ շարժախաղերը՝ ճիշտ կանոնների պահպանումով, • շարժախաղերի ժամանակ կարողանում են դրսևորել համարձակություն, նախաձեռնություն, ինքնավստահություն, ինքնատիրապետում, արագաշարժություն, ճարպկություն, • տարբեր իրավիճակներում կողմնորոշվում և համագործակցում են խաղընկերների հետ:
------------------------------------	---	--	---

Ձև Ֆ/1-Գ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ _____ ԱՄՍԱԹԻՎ _____

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՑ ՍՈՎՈՐՈՂԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԻՉ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ու ս ու մ ն ա կ ա ն ձ ե ո ք ք ե ր ու մ ն ե ր		
Մարմնամարզական վարժություններ	Աթլետիկական վարժություններ	Շարժախաղեր

Ուսուցիչ _____

Ա. Ա. Հ. (ստորագրություն)